



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐ ԵԿԵՂԵՅԻ

Բ.

Հոռի եկեղեցին իրական պետություն մը եղաւ իր հոգևորական պատմութեամբն ապա: Անոր պետական ըմբռնումները ձեռնած էին հեթանոս Հոռի կայսերական և պետական մեթոդներուն վրայ, և իր ձգտումները՝ դէպի կրօնական կայսրություն մը հաստատելու՝ նպատաւոր դեռին դտան աւատական բռնապետություններու տակ իրենց արուականությունն ու ինքնությունը կորսնցուցած ժողովուրդներու մեծածաւալ զանգուածին մէջ:

Ատեն եղաւ միջնադարեան Եւրոպայի մէջ որ պապերը ամենէն հոգի վեհապետներու հաւատար և անոնցմէ աւելի ազդեցիկ դիրքեր բռնեցին: Վասնզի Հոռի պապը ո՛չ միայն հոգևոր իշխանություն ամենէն վերին ներկայացուցիչը կը գաւանդէր, ո՛չ միայն անոր վճիռները վերջնական էին հոգևոր իրերու մէջ, այլ նաեւ աշխարհական և քաղաքական գործերու մէջ, որովհետեւ ո՛չ միայն թագաւորի մը կամ իշխանի մը պէս տուրքեր կը հաւաքէր, բանակ կը կազմէր, այլև թագաւորներէն աւելի հեղինակություն և հմայք ունէր Եւրոպոյ մէջ: Թագաւորներ, իշխաններ, աւատապետներ կ'իշխէին որոշ երկիրներու և շրջանակներու վրայ, անոնց հատոյթին ազդեցութիւնը իրենց շրջանակներէն ու սահմաններէն անդին չէին անցներ. իսկ պապերուն ազդեցութիւնը կը տարածուէր բովանդակ Եւրոպայի վրայ, անոնց հատոյթի ազդեցութիւնը էին բոլոր Եւրոպական երկիրներ. պապական պատգամաւորներու առջև թագաւորներ կը խոնարհէին: Խաչակրական շարժումը միայն բաւական է պապերու այս տարածեալ ազդեցութիւնը բացատրելու համար:

Ինչպէս շինուեցաւ պապական հեղինակությունը. — երկու կերպով. Կրօնական և Տնտեսական ոյժերով:

Կրօնական հեղինակություն հիմ եղան Աւստրալներուն քանի մը տունէրը (Vsp. ժ. 18cr., Ղկու. Ի. 31cr., Յովն. Ի. 21cr.) լատինամիտ մեկնութեամբ, այսինքն՝ Յիսուս-Քրիստոսի առաքեալներուն մէջ Պետրոսին վերադրուած առաջնությունը լատին գաւանանքով: Այս գաւանանքը այնքան մշակուեցաւ և բարդաւաճեցաւ Հոռի եկեղեցւոյն մէջ որ պապեր Պետրոսին վե-



138-98
(700-66)

բաղրուած առաջնութենէն ու առանձնաշնորհումներէն աւելին ստեղծեցին իրենց համար:

Տնտեսական հեղինակութեան հիմ եղան պապական երկիրներ, որոնք թեւադրեցին պապութեան քաղաքական վեհապետութեան ծրագիրը. և այսպէս՝ Ս. Պետրոսին յաջորդները ո՛չ միայն եկեղեցական նուիրապետութեանց մէջ առաջինը Հռոմի եկեղեցին է յայտարարեցին, այլ նաեւ եւրոպայի պետութիւններուն մէջ ալ, քաղաքական վեհապետութեան առաջնութիւնը խելել ուղեցին այլաբահական թաղաւորներու ձեռքէն, և նոյն իսկ պահ մըն ալ յաջողեցան:

Պապերու քաղաքական վեհապետութիւնը սկսաւ Լըզ դարուն: 727 ին Լոմպարտացիք Գրիգոր Բ. պապին քաղաք մը (Sutri) տուին: Ստեփան Բ. պապը 753 ին Ֆրանսայի զինեալ օգնութեամբ տիրացաւ Ռավեննայի Էքզարքութեան և ուրիշ մասերուն: Շարլըմաներ 781 ին և 787 ին Միշլին Իտալիոյ մէջ ուրիշ երկիրներ տուաւ պապին: Թէև ժուգ դարուն, անխլխանութեան երեսէն պապեր կորսնցուցին իրենց քաղաքական վեհապետութիւնը և մնացին լոկ կրօնական իշխանութեան մէջ, բայց երբ 1014 ին Թոմքանայի մէկ մասը և 1052 ին ալ Պէնէ-վէնիթո պապութեան ձեռք անցան՝ վերանորոգուեցաւ պապերուն քաղաքական վեհապետութիւնը և ընդարձակուեցաւ, այնպէս որ Լեոն Թ. 1052 ին Իտալիոյ նօրմաններուն վեհապետը եղաւ: 1115 ին Գանսսայի Մաթիլտ կոմսուհին պապութեան կտակեց իր այլևայլ աւատները, զորս չէր կրնար պաշտպանել Գերմաններուն դէմ: Հենրիկոս 2-ի մահէն ետքը (1197) Իննովկենտիոս Գ. տիրացաւ Անքօնայի, Սիօլէթօյի դքսութեան, Թօքանայի, Ասիլիի և Փէրուկիայի: 1213 ին Ֆրետերիք Բ. կայսրութեան ոսկի կնիքով վաւերացուց պապական կալուածները: 1348 ին Ֆրանսա պապութեան շնորհեց Վընէսէնի կոմսութիւնը, իսկ պապը ինքն գնեց Ալլինենուն: Երբ Ալլինենուն եղաւ պապութեան աթոռանիստը, պապերուն քաղաքական վեհապետութիւնը անուանական բան մը դարձաւ Իտալիոյ մէջ, բայց Յուլիոս Բ. պապ զէնքի ուժով պահպանեց իր տիրապետութիւնը:

Պապերը, իբրեւ վեհապետ և տէր երկիրներու և իբրեւ կրօնապետ Հռոմի եկեղեցւոյն, որ նախ քան բողոքական շարժումներ, միակ եկեղեցին էր բովանդակ եւրոպային, շատ բարձր հեղինակութիւն չինեցին Ս. Պետրոսի աթոռին: Երկու Գրիգորներ մասնաւորապէս ուշադրաւ են պապական տարեգրութեանց մէջ. Գրիգոր Ա. (590-604), «միջնադարեան պապութեան հայրը», առաջին անգամ միութեան քաղաքականութեան մէջ: Միւսն է Գրիգոր Է., նըշանաւոր Հիլտիպրանտը (1073-1085), որ իր առջեւ խոնարհեցուց և նուաճեց Գերմանիոյ Հենրիկոս Գ.ը:

Կրօնական և տնտեսական միացեալ ուժերու վրայ հաստատուած պապական վեհապետութիւնը պիտի չկրնար անդրդուելի մնալ յաւետ: Դժգոհութիւնը թէ՛ ժողովուրդի կողմէն և թէ՛ թագաւորներու և իշխաններու կողմէն, միշտ կային ընդդէմ պապական վեհապետութեան: Պոհնմիոյ և Գերմանիոյ գիւղացիութիւնը մասնաւորապէս պատրաստուած զեռին մըն էր՝ նետելու համար պապերու տնտեսական լուծը. զոր օրինակ, երբ Լուտեր օգտուեցաւ չինական ժողովուրդի այդ տրամադրութենէն և յանուն բարեկարգութեան կոչում ըրաւ գիւղացիին դիւրաբորբ զղացումներուն և ըմբոստացուց զանոնք, ասոնք գիւրու-

թեամբ մերժեցին Հռոմի ամուսին ունէ հեղինակութիւնն ու հարկը իրենց վրայ: Այնպէս որ Լուտերի յառաջ բերած կրօնական բարեկարգութեան այդ մեծ շարժումին յաջողութեան մէջ կենսական դեր կատարեց ժողովուրդին պապական տաւրքերէ և հարկերէ ձերբազատումը. իրողութիւն մը, որ այնչափ ժպտեցաւ իշխաններու և թագաւորներու, որոնք խրաջուցին լուտերական բարեկարգութեան շարժումը և կազմեցին ատոր յաջողութեան զօրաւոր զսպանակը: «Աւետարան»ին լուտերեան քարոզութենէն այնքան ողբւորուած ու զինովցած էին գիւղացիները որ անոնք, իբր դրական արդիւնք նոր քարոզութեան, պահանջեցին Մովսէսէն օրինադրուած յորեւեանը կատարել, որ կը ջնջէր բոլոր պարտքերը:

Գաղափար մը տուած ըլլալու համար պապութեան տնտեսական ռոյժին վերայ յիշենք միայն մէկ պարագայ. երբ Ֆռանսական յեղափոխութեան հետեւանքով պապական իշխանութեան երկիրները պետականացան, Հռոմի եկեղեցին միայն Ռէնի ձախ ամիրն վրայ կորսնցուց 1719 քառակուսի վարսախ երկիր մը, որ 3,162,576 բնակիչ ունէր և 21 միլիոն ֆռանքի եկամուտ մը տարեկան:

Ահա թէ ի՞նչ կը նշանակէ պիտոլիւն և եկեղեցի պատմութեան մէջ, կամ կրօն և քաղաքականութիւն, որոնց անջատումը իրարմէ կենսական խնդիր մին էր բոլոր Եւրոպայի համար մասնատրարար տնտեսագիտական տեսակէտէ: Եւ այս է պատճառը որ Եւրոպա ուղեց պապութեան ձեռքէն խլել նախ տնտեսական զօրութեան աղբիւրները և յետոյ կոտորել անոր կրօնական գերիշխանութեան հմայքը, ոյժ տալով բողոքական եկեղեցիներու կազմակերպութեան: Բայց այնքան ալ դիւրին չեղաւ այս աշխատութիւնը. Լուտերէն մինչև Նաբոլէոն Պոնափարթ, այսինքն ժողովրդաբու սկիզբէն մինչև ժողովրդին սկիզբը տեսց, և վերջապէս հարուածը Նաբոլէոն տուաւ Հռոմի եկեղեցիին քաղաքական վեհապետութեան, 1801 Յուլիս 15ի Քօնքօրտայով, զոր ստիպուեցաւ ստորագրել Պիոս Է:

Այս նշանաւոր դաշնագիրին զլխաւոր կէտերն էին. կաթոլիկութիւնը Ֆրանսայի մեծամասնութեան կրօնքն է. աղատ է եկեղեցական հանրային պաշտամունքը, հերիք է որ յիսանդարտի հանրային անդորրութիւնը: Նոր թեմադրութեան համեմատ պիտի ըլլան միայն տասը արքեպիսկոպոսական և յիսուն եպիսկոպոսական թեմք: Առաջին Քօնսիլն է (Նաբոլէոն) որ պիտի նշանակէ նոր եպիսկոպոսները, իսկ պապը պիտի հաստատէ: Ծուխերը պիտի սահմանուին կառավարութեան հետ համաձայնելով: Իւրաքանչիւր թեմ կրնայ ունենալ միայն մէկ եկեղեցական դպրոց, իր ծախքերը իր վրայ: մայր եկեղեցիներ և ծխական եկեղեցիներ կ'ենթարկուին եպիսկոպոսներու իշխանութեան: Պապը կ'ընդունի եկեղեցական կալուածներուն պետականացումը, բայց կառավարութիւնն ալ պիտի հոգայ եպիսկոպոսներուն և քահանաներուն պէտքերը: վերջապէս պապը կ'ընդունի որ Առաջին Քօնսիլը կը վայելէ հին կառավարութեան պապին քով վայելած բոլոր իրաւունքներն ու առանձնաշնորհումները:

Նաբոլէոն Հանդուրժեց պապական այդչափ նուաճեալ հմայքին ալ. երբ 1804 Մայիս 18 կայր հռչակուեցաւ Առաջին Քօնսիլը, ուղեց Շարլըմանների պէս թագուիլ պապին ձեռքով, բայց ոչ թէ Հռոմի, այլ Փարիզի մէջ: Այս նպատակով զիմեց Պիոս Է-ին, որ հաւանեցաւ, այն պայմանաւ սակայն որ հնար եղաւ ծին չափ կրօնական նկարագիր մը ունենայ թագադրութեան հանգէսը, Նաբո-

լէոն չհակառակեցաւ, և պապը եկաւ Թոնթէնպէօ, բայց ընդունուեցաւ իբրեւ դրան եւեց մը (կամ թուրքերէն այժմ ըստածին պէս իբր «պաշ փափաղ» մը), և ամէն բան ըրաւ պապը պղտիկ ձգելու համար իր և ժողովուրդին առջեւ այնպէս որ թագադրութեան հանդէսին մէջ իսկ թաղը իր ձեռքով առաւ դրաւ իր դըլուխը փոխանակ պապի ձեռքէն ընդունելու:

Նաբոլէոն իր եղբայրը (Ժօզէֆ Պոնափարթը) թագաւոր նշանակեց Նաբոլիի վրայ, պապը հակառակեցաւ, բայց ֆռանսական զունդերը յանկարծ Հռոմ մտան 1808 փետր. 2 ին. իսկ 1829 մայիս 17 Նաբոլէոն կայսր Շէօնպրուսի պալատին մէջ ստորագրեց այն հրովարտակը որով կը յայտարարուէր թէ պապական երկիրներ միացած են պետութեան:

Իտալիոյ մէջ պապը դեռ կը պահէր իր վեհապետի հմայքը ժողովուրդի աչքին, բայց հոն ալ քաղաքական իրադարձութիւններ վերջ տուին պապերու աշխարհիկ վեհապետութեան:

Իտալիա փոքրիկ իշխանութիւններու բաժնուած երկիր մըն էր, և ստորին և վերին Իտալիա կը պատկանէին պապին: Իտալիոյ միութեան ծրագիր մշակուած էր, Կարիպալտի, Բալուր դործի վրայէն: Նաբոլէոն խորհուրդ տուաւ Պիոս Թ.ին որ գոհանայ Հռոմով և Ս. Պետրոսի կալուածներով: Բայց Իտալիոյ եռանդուն յեղափոխականները ատեն չթողուցին որեւէ համաձայնութեան, Կարիպալտի հետզհետէ գրաւեց Սիկիլիա կղզին, Նաբոլի թագաւորութիւնը և պապական երկիրները: Պապական բանակը զօրավար Լափորխէրի հրամանատարութեամբ ուժգին դիմադրութիւն մը փորձեց, բայց ջախջախուեցաւ 1860 Սպտմ. 18 ին, և 1861 Փար.ին Վիկտոր-Էմանուէլ թագաւոր հռչակուեցաւ Իտալիոյ: Բալուր Մարտ 27 ին յայտարարեց երեսփոխանական ժողովին մէջ թէ Հռոմ անհրաժեշտ էր Իտալիոյ կազմակերպութեան համար, բայց պայմանաւոր Թռանսա հաւանի և պահուի պապին հոգեւոր գերիշխանութիւնը: Պիոս Թ. ի զուր դիմադրեց ֆռանսական զինուորներու օգնութեամբ: Վիկտոր Էմանուէլ գրաւեց Բիւրինալի պալատը, պապին թողլով Վատիկանի և Լատերանու Ս. Յովհաննէսի պալատները, Բասթէլ Կանտօլֆօյի հետ: Ասիկէ զատ Իտալիա 1871 Մայիս 15 ին ապահովութեանց օրէնքով պապին կ'ապահովէր տարեկան հաստատուն եկամուտ մը, վեհապետական իրաւունքներ, անձնական անընտարարելիութիւն, հեռագրի և փոստի մասնաւոր պաշտօն մը, որպէսզի ազատ յարարութիւն ընէ պետութեանց հետ, բայց Պիոս Թ. մերժեց, և փակուեցաւ Վատիկանի մէջ իբրեւ ցոյց բողոքի: Պիոս Թ. յաջորդները շարունակեցին ինքնարգելումի այս քաղաքականութիւնը, իոյն իսկ այսօր անընտարարելի է Վատիկան, որուն մուտքը կը պահեն պապին զինուորները, միջնադարեան դունադեղ լայնչի համադգեստով պաճուճուած. թէ և անոնք այլեւ չքախումբի մը տալաւորութիւնը կը թողուն այցելուին վրայ: Վասնզի 1870ական թուականներէն ի վեր բոլոր աշխարհի քաղաքական կեանքը փոփոխուած է և պապութիւնը, հակառակ իր պատմական բողոքին, համակերպած է քաղաքականութեան պահանջին, միշտ պահելով իր հմայքը պետութիւններու առջեւ. հմայք մը որ թէ և զուրկ իր միջին դարու քաղաքական զսպանակներէն, բայց զգալի կ'ընէ իր բարոյական զօրութիւնը և կրօնական հեղինակութիւնը: Այնպէս որ նոյն իսկ այսօր Մուսօլինիի տիրութեան երկաթի բռունցքին տակ Վատիկան լիովին կը վայելէ իր անընտարարելիութիւնը: